



ըրոյն ու ծնողներն թուրքերը կոտորել են կամ գերի տարել, և մենք չը պիտի մերկայնէինք այս խաղաղասիրտ ժողովուրդները, որովհետև Ա. Ղազարի միաբաններն համար օրէնք է, որ «Առայժմ (!) հայուն մարի և արհեստի գործիչները ջանալու ենք աւելի խրախուսելու քան թէ վնասեցնելու»: Խրախուսել մի Գալֆայեանի, ավերել և արհեստս բառեր կապել այդ խաղաղողի հետ, որ Պարսկում, Սարսիի ներկայութեամբ, Վոսկրէս է խաղաղել... Միտիթարեան դարավերջիկ հրապարակաստութեան այս գոհարներն տեսակետից «Մշակը» յանցաւոր է, իսկ Տիրքան Նազարեանի անդուզական աշխատակից Յովհաննէս Քոմանեանց արժանի է ամենայն ջատագովութեան, քանի որ «Տարազի» մէջ պաշտպանել է իր «Տար» հովանաւորութեան» տակ առած խաղաղողին: Ենթահարում ենք Միտիթարեանի այս ճշմարիտ գործարարական և շատ բնորոշ քաղաքականութիւնը... Գոնէ նրանք շատ երախտագարտ պիտի լինեն Առաջին «Վախճանի» երգիչ Քոմանեանցին, որ հնարաւորութիւն է տուել նրանց ծանր ու բարակ փիլիսոփայութիւններ անել լրագրական էտիքայի և այլ այսպիսի «խորհրդատու» առարկաների վրա: Իրաւ, եթէ Յովհաննէս Քոմանեանց «չապացուցանէր» թէ Գալֆայեան Աստուծու անմեղ դատուել է, այդ հանձարի ներկայացուցիչ, մեր վանական հնազանդ ամառիկը թրտորել պիտի հասնէր այն երեւելի գիւտին, թէ այս դէպքում էլ գործում է կուսակցական ոգին: «Քրիստոնէական գաղափարներ» անունը խաղաղողութեան դրօշակ դարձրած մարդու դէմքից դիմակ պիտի պարտաւորութիւն չէր ուրեմն, այլ կուսակցական քննաճանաչութիւն: Արքան միամիտ է այս վանական փիլիսոփայութիւնը, որքան խնձ ու կրակ է այս հասկացողութիւնը: Կուսակցութիւն... Պակասը այն էր, որ այդ բառով արդարանան Գալֆայեանները և նրանց Քոմանեանները: Կուսակցութիւնը, վերապատուելի հայրեր, ձեր հասկացածից շատ է բարձր, շատ է մարդու: Եւ միթէ դուք դեռ այնքան հեռու էք իրական աշխարհից, որ կարծում էք, թէ մի որեւէ Գալֆայեան կարող է կուսակցութեան արժանի էակ լինել: Այ, այդ ձեռք համար մեթ է անհասկանալի հանգամանք մէջ գործում է մի այլ, աւելի պարզ և անպակաս սկզբունք: Մենք կը հասկանանք ձեր օրինակներով: Երբ դուք խորատուզում էք այն հարցի ընդունելու մէջ, թէ երբ և ինչպէս է հաստատուել պատարագի արարողութիւնը, մենք առում ենք՝ «դա ձեր գործն է, արէք, և եթէ մեզ հարկաւոր լինի խօսել այդ առարկայի մասին, մենք կը դիմենք ձեզ, իբրև հեղինակաւոր աղբիւր: Բայց երբ դուք սկսում էք ծաղրել Գալֆայեան, անմիտ էք հրատարակում XIX

դարի այդ հակայական միտքը, այն ժամանակ, ներքեցէք, մենք ձեռքներս թափել ենք տայիս, ծիծաղում ենք և փակում ձեր հակադարձիտական էջերը: Նմանապէս, երբ պարոն Յովհաննէս Քոմանեանցն ոտանաւորներ է շինում Լոռու արքերի վրա, անտանան հրճուանք է զգում լեռնիցները «եպիլիները», մենք ոչինչ չենք ասում. բայց երբ նա սկսում է ճառել զեղարուեստի մասին, մեծ-մեծ բրդել թէ ինչ է հանձարը և ով պիտի լինի հանձար, երբ նա Սարսիի գերն է իր վրա վերցնում, — մենք ասանց մի բոլոր տատանվելու, առանց նոյն-իսկ մտածելու, թէ ինչ տպաւորութիւն կը գործի մեր խօսքը արժանայարգ պարոնի վրա, ասում ենք, որ դա յանդգնութիւն է, ասում ենք, որ Քոմանեանցը ճառում է այն բաների վրա, որոնց մասին ծպուտ հանելու իրաւունք անպակաս չունի: Այս է այն բանը, որ տեսնում ենք մեր վարժուները մէջ. և, անշուշտ, մեր մեղքը չէ, որ չեն հասկանում թէ ինչ բան է դա... Բայց մենք դրանից աւել չենք խօսում: Նոյն այդ Քոմանեանցը Տիրքան Նազարեանից պատկերաբար քարվանսաբայում շատ է զլլիկն դուր տուել, շատ է աշխատել ցոյց տալ, թէ մի բան ուղղում է ասել «Մշակի» դէմ, բայց մենք երբեք չենք կարողացել իմանալ, թէ ինչից է այդքան ուռել այդ խնձ պարոնը, որ ստանաւորներ է դրել և կարծում է թէ հենց դրանով աշխարհի բոլոր գեղեցիկութիւնները ձեռք է բերել: Այդ պատճառով էլ մենք ուշադրութիւն չենք դարձրել նրա վրա, թող տարվէ, որ իր մտքում մեծ պատիւներ անէ իրան, եմթարելով թէ իր այդ բարտը կուսակցական պատճառ ունի: Այս բոլորից յետոյ «Վախճան» մեզ դէմ է ուղղում հետեւեղ տողերը, իբրև հետեւեղ այն թիւղաբանութեան, որ Յովհաննէս Քոմանեանցի գրածներին է հանել Ա. Ղազարի միաբանութիւնը:

Ահաւասիկ այս լրագրութեան հիւանդ ըսկզբունքներն ենք. ողջամիտ և անկողմնակալ է այն խմբագրութիւնը, որ ըստ սովորին սինն սև ու ճերմակին ճերմակ կը թափէ քայքայ անմիտութեան է ըսելն, թէ հրապարակադրներն մի քանիք այդ ճշմարտութեան հակառակ ուղղութիւն մը կը թռնեն. և այդ ողջամիտ հասարակութեան վրա լաւ տպաւորութիւն մը չի թողնել:

Եւ իսկոյն վանական ամսագիրը աւելացնում է «խրախուսելու» և «վնասեցնելու» ըսկզբունքները: Կա նշանակում է թէ սեր ու ճերմակի վերաբերմամբ պէտք է պայմանական հասկացողութիւն ունենալ. եթէ, օրինակ, մի բան, դիմել թէ խաղաղողութիւնը, սև է, երբ կատարվում է օտարի ձեռքով, նա պիտի ճերմակ համարվի, երբ նա է նրա հերոսը և մենք պարտաւորութիւն ունենք ճերմակ ասելու «խրախուսելու» համար. մենք չը պիտի սինն սև ասենք,

վախճանով, թէ մի գուցէ դրանով «վնասեցնենք»: Ահա մի բարոյական դաս, որին մենք երբեք չենք հետևի և որ վերադարձում ենք «Վախճան»-ին, խորհուրդ տալով չը մտածել «մենք սովորեցնում ենք անպայման կերպով դատապարտել վառը, սին ու սպիտակը որոշելու ոչ մի կողմնակի նկատում, ոչ մի արդարացիոհ հանգամանք չընդունել...»

ԳԻՐԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԼԷԱՔՅԵԱՆ

Կ. Պոլսի լրագրները երէկ լուր բերին, որ օգոստոսի 15-ին, երկարատև, ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց Կ. Պոլսում Գրիգորիս արքեպիսկոպոս Ալեալեան: Իր մեր աչքի ընկնող հոգեբանականները մէկըն էր: 1862—1864 թվականներին նա խորքազրէր էր և հրատարակում էր «Քրիստոսի Պէղատեան» անունով մի լրագիր: Առժամանակ դատարանից թիւթի հրատարակութիւնը, նա ճանապարհորդեց թիւթեաց Հայաստանում: Վարժական պաշտօն է վարել Հայաստանի գաւառներում, զլրաւորապէս Մուշում և Վանում, որ վատտակել է ժրք, անվախ և ժողովրդական շահերին նուիրված առաջնորդի հոշակը, մի բան, որ շատ քիչ հոգեբաններին է վիճակված: 1892 թվականին, կաթողիկոսական ընտրութիւններին ժամանակ, Ալեալեան կաթողիկոսական թեմակառուցութիւնը շարքը մտաւ և նրա թեմակառուցութիւնը ուսասանների մէջ պաշտպանում էր «Մշակը», որ և տպագրեց մի քանի կենսագրական տեղեկութիւններ նրա մասին («Մշակ» 1892 № 35): 1895 թվին, Եզմիրեանի պատրիարքութեան ժամանակ, երբ վախճանվեց Սոյի Մկրտիչ կաթողիկոսը, Ալեալեան ընտրվեց Կիլիկիայի կաթողիկոս, բայց այդ խառն և աղմկալից ժամանակներում թիւթեաց կառավարութիւնը չը հաստատեց և չէր կարող հաստատել այդ պաշտօնում Ալեալեանին պէս մարդուն, որին առաջուց էր ճանաչում և որի վրա չէր կարող նոյն վստահութիւնն ունենալ, ինչ ունէր Ալեալեաններին, Բարթողիմէոսների վրա: Կիլիկիայի կաթողիկոսական հարցը արձաւ մի շատ կրճատ նախ, որ խնձով պատահաւոր այն ժամանակ, երբ Կիլիկիայի մի քանի հոգեբանականներ զանազան դատաճանական միջոցներով կամեցան թիւթեաց կառավարութեան աջակցութիւնը ձեռք բերել Ալեալեանին տապալելու համար: Քանի Կիլիկիայի կաթողիկոս պատրիարք էր, Ալեալեանի կաթողիկոսական ընտրութիւնը համարվեց օրինաւոր և անբեկանելի: Բայց Օրմանեան պատրիարքի օրով «Կիլիկիան» փոխվեց և 1898-ին խառն

ժողովը գործեց մի մեծ ապօրինութիւն, համարձակվելով իր իշխանութեամբ «հնչացնել 1895-ի ընտրութիւնը և հրատարակել նրան չեղած»:

Կ. Պոլսի լրագրների նկարագրութիւններից երևում է, որ Ալեալեան արքեպիսկոպոսի յուրաքանչյուրութիւնը և թաղումը կատարվել է շատ շեղ և ժողովրդի անազին բազմութեան ներկայութեամբ: Իսկ ցոյց է տալիս, որ հանգուցեալը իր գործունէութեամբ գրաւել էր մեծ ժողովրդականութիւն:

ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒ ԳԱՒԱՌԻՑ

Ախալքալաք գիւղ, սեպտեմբերի 3-ին

Մեր հասարակութիւնը օգոստոս ամսին, շուրջի մի քանի օրերից հետո անձանց, երկու աչքի ընկնող հասարակական գործ կատարեց: Առաջինը՝ հայ հասարակութիւնը իր հաշուով վերաբացեց նախկին հայոց դպրոցի տեղ նոր միջնակարգ դպրոց, որ ուսանելու են միայն հայ մանուկներ, և երկրորդ՝ Ախալքալաքի շրջակայ գիւղերի հասարակութեան համաստեղանով բացվում է Ախալքալաքում գիւղական հիւանդանոց (приемный покой), որ լինելու են առայժմ մի բժիշկ և մի ֆելդշեր: Սկզբնական ծախսերի համար ժողովուրդը սիրով հանգանակեց մոտ 600 բուլլի, այդ նպատակով տրվեց և մի պարահանդէս Հիւանդանոցի տարեկան ծախսերը ծածկելու համար որոշված է առնել ամեն մի տանից մի բուլլ: Հիւանդանոցի մուտքը և տեղերի դիմը ձեր պիտի լինի: Բժիշկին առև հրախրելու դէպքում իշխան-ազնականները վճարելու են 40 կոպէկ, իսկ գիւղացիները 30 կոպէ:

Մտիկ գիւղերից Նոստընը (զուտ վրացաբնակ) դեռ այնքան խորն է ընկրված ազիտութեան մէջ, որ աւելի բարւոք է համարում ամեն մի հիւանդութեան դէպքում ընկնել զանազան գրքացիների և սրբերի դուռները, քան թէ ստորազրկել համաստեղանի տակը, բայց առհասարակ գիւղացիները ինչ որ չեն համոզվում լոկ խրատներով և դատարկ բացատրութեամբ, շուտ են ըմբռնում աչքով ու շոշափելի փաստերով տեսածը, ուստի յուսով ենք, որ նոստցիներն էլ շուտ կը միանան այդ բարի գործին:

Ի միջի այլոց ասենք, որ այս տարվայ ընթացքում մինչև սեպտեմբերի 1-ը միայն հայերի երեխաներից ծաղկով, փորհարիչով և կապոյտ հաղով վախճանվել են 80 հոգի:

Եթէ պատահաւորապէս էլ բացվի, այն ժամանակ Ախալքալաք Թիֆլիսին մօտ գտնվող յարմար ամառանոցներից մինը կը դառնայ:

Յ. Մ.

հրապարակաստութիւնը ըլլում էր նրա գրչի ծաղիկը. 52 տարեկան հասակում էլ նա ամբողջապէս եռանդ էր, չէր դադարում հայերին առաջադիմութիւն, վերաբարձութիւն, եւրօպական միտք և հոգի քարոզել, և չէր կարելի ասել թէ նա ոյծ չունի աւելի երկար ծառայել իր ազգի մասար գարգացման գործին, եթէ ազգն էլ պարտաճանաչ գտնվէր, չը թողնէր իր վատտակաւոր մշակին մենակ, առանց միջոցներ: Նազարեանցը արել էր ամեն ինչ, ոչինչ չէր ինչայն մի բարեխիղճ, հանրաշահ գործ կատարելու համար: Նրան աջողվեց հայերի մի մասը, թէ և անշուն մասը, հաշտեցնել ժամանակի դադարների հետ, բայց չաջողվեց վերաբացել հայի աւանդական անտարբերութիւնը դէպի իր մայրենի գրականութիւնը: Հայի համար եկել էր այն բարեբախտ ժամանակը, երբ գիտութեան, քաղաքակրթութեան լայն կարող էր ստանալ անմիջապէս իր հարեակից, իր սեփական լեզուով: Բայց այդ բարեբախտութիւնը, որ բոլոր մանր ազգերին չէ վիճակվում, հասկանալ չը կարողացաւ հայը. նա չիմացաւ դառնալ ուղղորդ, վճարող ընթերցող, իսկ այդ անբարեխիղճութեան դէմ ոչինչ անել չէր կարելի:

1864 թվին վերջերում Նազարեանցը ընդմիջում փակեց «Հիւսիսափայլը» լուսատու էջերը, դէն դրեց հրապարակաստի գրիչը: Այդ գրիչը հրատարակելը սրտաուռ էր. Նազարեանց Շիրիլի բերանով դառն զանազան էր ուղարկում ճակատադրին, որ նա կրակ ու եռանդ էր դրել իր կրճքում, բայց գցել էր կոյրերի աշխարհը... Այնուհետև Նազարեանց արդեց 15 տարի, բայց մեռած էր հայոց հրապարակաստական գրականութեան համար, ինչպէս ասաց «Մշակը» 1879-ին՝ նրա մահացուցակի մէջ: Ծիչը է, վերջերում Նազարեանց փորձեց նորից իջնել իր թողած հրապարակ, ուղեց հրատարակել «Վաղատեր Հայաստանի» անունով մի պարբերական թերթ, բայց աջողութիւն չունեցաւ:

Մենք, սակայն, մի վերջին ակնարկ գցենք

Նազարեանցի թշնամիների վրա: Կարելի է ասել թէ «Հիւսիսափայլը» մահը հայ տիրացուական «կիլիկ» յաղթանակն էր: Երբեք: Աւելի ողբալի էր նրա սիրած ու պաշտած ժամուկի դրութիւնը: Վառնիկը դադարեց 1863-ի վերջում, «Մեղուն» Մանդիկեան քանադայից անցաւ Միւնխենի գործին, և երկար ժամանակ լրագրի նմանութիւն չունէր. «Նազարեանց» անհետացել էր, «Մասեաց Աղանին» մօտ էր օրհասին: Վրա հասաւ մեր պարբերական ժամուկի մասը ժամակալը. լայն ընկաւ և էլի մասեաց Մանդիկեանից չէր զնայ «Վարուներ» և մտկոյն Տիրքանի վրա մնաց «Հայկական Ալխարհը», որ կենդանութեան նշաններ էր ցոյց տալիս, բայց շատ էր փոքրիկ և շատ էր անկանոն հրատարակվում:

Սկան եօթնամսնական թվականները: «Հիւսիսափայլը» համարձակախօս, ազատամիտ հրապարակաստութիւնը սերմեր էր թողել. ջրնադատող, մտքակող ուղղութիւնը նորից յաղթութիւն ասաւ, այս անգամ ոչ թէ հիւսիսում, հայկական կեանքից հեռու, այլ Թիֆլիսում, հայ հասարակութեան մէջ... X

Մարդ, խորատուզովով Նազարեանցի հրապարակաստութեան ամբողջ գործունէութեան մէջ, չէ կարող չը դարձանալ այն հետաետեւութեան, ճշմարիտ իրական հայրենասիրութեան վրա, որոնք յատուկ էին այդ շատ երախտաւոր, անմոռանալի գործիչին: Իսկպաէս, այդ հրապարակաստութեան դուրն ու ծուծը, ամբողջացրած ծրագրերը Նազարեանց դրել է հայ հասարակութեան առաջ «Հիւսիսափայլը» հրատարակելուց շատ առաջ, 1846 թվականից սկսած. և «Հիւսիսափայլը» հրապարակաստութիւնը շատ և շատ տեղերում ներկայացնում է նախկին ասածների կրկնութիւնը: Կրկնութիւնների դէմ չենք. ընդհակառակն, նրանք հարկաւոր են, նրանք անխուսափելի են որոշ ծրագրեր, որոշ ուղղութեան հետևող հրապարակաստութեան

մէջ. Նազարեանց հիմնական մտքի կրկնողութիւնները տալիս էր զանազան աւիթներով, լուսաբանելով զանազան կէտերից: Աստիճանաբար նա բարեփոխել, զարգացրել է իր ծրարդը, բայց հիմքը, միտքը միևնոյնն է մնացել: Կիւմիլով այդ միջուկին, ինչ կը տեսնենք, Կիւմիլ էր Նազարեանցի դատաճանները հիմքը, սրբութիւն սրբոցը:

— Հայր իբրև ժամանակակից ազգութիւն:

Շատ սիրում էր Նազարեանց յաճախ յիշատակել «չառակի» Վառնիսին, որ ուսում էր իր որդիներին Կառնոսը—ժամանակն է: Ժամանակը ոչնչացնում է անպիտանացած ազգերը: Սա ճակատագրական, ընդհանուր, բացարձակ օրէնք է: Կիւմիլը է անել այդ աստուր ժամեցները պատմելու համար: Մի պատասխան կարող է լինել—չը պէտք է անպիտանալ, պէտք է մի առողջ կեանք ձեռք բերել: Իսկ հիմն է այդ տեսակ կեանքի գաղտնիքը: Մարդու անցեալը, գիտութիւնը պատասխանում են—չարժողութիւն: Այստեղից առաջանում է անողոր օրէնքը—անխուսափելի մահանշարժութեան համար, կեանքը առաջ դնացող, շարժուն օրգանիզմի համար: Ամենից առաջ և ամենից շատ Նազարեանց ցանկանում էր, որ հայը կատարէ իր հանրամարդկային պարտաւորութիւնը—կանգ չառնէ, առաջ գնալ բոլոր առաջացող ազգերի շարքում: Կիտութիւն, լուսատարութիւններ, աշխարհայինութեան ընդունակ ազգերի մէջ գտնվելու համար: Բայց հայը մարդ լինելուց յետոյ մի յայտնի ցեղի, մի յայտնի ազգութեան անդամ է: Այստեղից ըլլում է նրա համար երկրորդ մեծ պարտաւորութիւն—ապրել, զարգանալ, առաջ գնալ իբրև հայ, այսինքն իբրև ինքն-բոյն ազգ: Նայելով իր ժամանակին, Նազարեանց վերին աստիճանի անմիտար եղբարակացութիւններին էր գալիս: Հայր իբրև մարդ դեռ այսպէս թէ այնպէս կատարում էր իր մարդկային պարտաւորութիւնը, ուսում էր առ-

նում, ձգտում էր լուսատարութեան ետևից գրնալ: Բայց նա չը գիտէր առաջադէմ լինել իբրև ազգ, բոլորովին չէր հասկանում իր ազգային պարտաւորութիւնները, ուստի իբրև ազգ դատապարտված էր շատակեր Կառնոսի փորում անյայտանալ: Եւ Նազարեանց բացատրում էր թէ ինչ է ազգայնութիւնը և ինչպէս պէտք էր նրան կենդանի պահպանել:

Իւրքանչիւր ազգ պիտի մտածէ, խօսէ, պարգանայ իր մայրենի լեզուով: Բայց հայը չունէր լեզու, կամ, աւելի ճիշտ ասած, ունէր մի մեռած, անգործածական լեզու: Նազարեանցի ծրագրի ամենամեծ մասը այսպիսի մի պարզ հանրամատչելի լեզուի ստեղծելն էր: Բոլորովին չուրանալով գրքաբարի հարստութիւնը, կանոնաւորութիւնը, նա, այնու ամենայնիւ, վերաբերվում էր նրան իբրև մի մեռած, վաղուց իր գոյութեան իրանուհի կորցրած լեզուի: Նա չէր կարող այլ ևս ազգի հանրութեան արտայայտիչ լինել. պէտք է մի նոր, կենդանի լեզու, ամենքին մատչելի, ամեն սրտի հաշագատ, որ կենդանացնէր ժողովրդի մտաւոր կարողութիւնները, մտցնէր նրա խորքերի մէջ ժամանակակից հակացողութիւններ, գիտութիւն, լայն: Կրթութիւն մայրենի լեզուով—ասա ամենամեծ պահանջը, որ դնում է XIX դարը ամեն մի անհատի, ամեն մի ազգութեան առաջ: Եւ Նազարեանց պահանջում էր, որ գիտութիւնները հայանան, այսինքն հայերեն լեզուով մատակարարվեն հայերին: Մշակելով կենդանի լեզու, այդ լեզուով գիտութեան զանազան ճիւղերը թարգմանելով և տալով հայ պատանիներին, կարելի էր ազգային կրթութեան հիմքը դնել: Զարգացնելով մատենագրութիւնը, մամուլը կատարելի էր առողջ, սննդաբար ներթ տալ հասարակութեան: Եւ Նազարեանցի առաջին ու վերջին խօսքը, յորդուրը, խրատն էր «մայրենի լեզու, մայրենի բարբառ»:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ հաղորդում են, որ հայ դերասաններից շատերը մինչև այժմ էլ չը գիտեն թե արդեօր Բագուում այս տարի էլ պիտի շարունակվեն հայկական ներկայացումները անցեալ երկու տարիների նման, թե ոչ: Զարմանալի է Բագուի հայ դերասանական ընկերակցության այդ անփութությունը: Մի քանի հանդամանքներից կարելի է եզրակացնել, որ հայկական թատրոնի միտքը մոռացված չէ. այսպէս, մեզ հաղորդում են, որ երկու անձինք դերասանական ընկերակցության առաջարկով թատր պատրաստված էին դնալ Բագու՝ ներկայացումներին մասնակցելու համար, բայց չը նայած որ նրանք արդէն կատարել են իրանց վրա վերջըստ պարտաւորութիւնները, յայտնի չէ թե պիտի հրաւիրվեն արդեօր թե ոչ: Մի խօսքով նկատվում է այն, ինչ այնքան բնորոշ է մեր գործերի համար. սկզբում առջ կպիչը գործին և ապա թուլանալ ու ձուլանալ: Խորհուրդ ենք տալիս դերասանական ընկերակցութեան աշխատել ապացուցանելու, թե նայելով մէջ ձուլութեան օրէնքը մի-մի բացատրութիւնն էլ է սիրում ցոյց տալ:

«Приаозовский Край» լրագիրը հաղորդում է, որ ներկայ տարվա հոկտեմբերի 4-ին լրանում է հրապարակախօս Փրիզոր Զանչեանի գրականական գործունէութեան 25 ամեակը:

Պ. Կարա-Սուրբաջի կոնցերտը, որ տեղի ունեցաւ կիրակի երեկոյեան արքունական թատրոնում, միջակ արդուութիւն ունեցաւ, բացի մի քանի խմբական երգերից: Թոյլ էին սօջ երգիչները:

Բարձրագոյն թողարկած է Ե. Փիլոյեանին, Ի. և Վ. Բէյտերներին, Ն. Վ. Ստրովին, ճարտարապետ Տառնիշիլին, ճարտարապետ Շիմկելիին, Պ. Ա. Օպոչինին, Յ. Ա. Քայլերանին, Ա. Մանթաշեանին, Մ. Գորտախանեանին և Վ. Ն. Պալստովին: Քիֆլիսի չինարարական ընկերութիւնը Քիֆլիսում զանազան տեսակ շինութիւններ կառուցանելու համար: Հիմնական դրամադուրին է 600,000 ռուբլի, բաժանված 2400 ակցիաների:

Վիրակի օր, ամսիս 5-ին, տեղի ունեցաւ բժշկական Միջ. Գեղեմանօվի մասնաւոր հիւանդանոցի բացումը: Բացման հանդէսին ներկայ էին մեծ բազմութիւն և բժիշկներ: Հիւանդանոցը գտնվում է Նիկոբազմակայա փողոցում, Սաղնիսի տանը և բաղկացած է 14 մաքուր և լաւ կահուորված սենեակներից: Առայժմ հիւանդանոցում դրված է միայն վեց մահակալ:

«Касбекъ» լրագիրը հաղորդում է, որ Արվերուզի և Ընկու՝ Գրոշնայի № 45 նաւթահորից սկսվել է ֆոսֆոր, որ օրեկան կէս միլիոն պուղ նաւթ է տալիս:

Նոր-Բայազէտի գաւառի Վերին-Ղարաւ Ղազարի գիւղից մեզ գրում են. «Ձէ կարելի գանդառովել ներկայ հունձից, այնպէս որ բաւականաչափ ցորեն և այլ հացբոյսեր առատ կունենանք. սակայն միայն բանաւոր մարդկանց մասին չէ, որ մտածում է դիւղացին, այլ և այն վատակաւոր անտուններին, որոնցով պէտք է ունենայ նա ապագայում իր և զրանց համար ապրուստ: Խոտը վերին աստիճանի սակաւ է ոչ միայն մեր գաւառամասում, այլ ամբողջ գաւառում, այնպէս որ մի սալը, որ բաղկացած է լինում 60 խորձից (20—25 պուղչափ), ներկայումս ծախվում է 10—15 ռուբլի, մաքուր ցորենը ծախվում է 30—33 ռ., գարին՝ 20—23 ռ., կտաւատ՝ 20—25 ռ., իւղը հալած՝ 25—30 կօպէկ ֆունտը: Մեր յայտը մնում է միայն դարձանի վրա, եթէ սա էլ առատ լինի»:

Շիրակի գաւառի Ղազարաշեն գիւղից մեզ գրում են. «Անցեալ օրը մեզ մօտ մի կին մեռաւ. տեղական բանասերները հրաժարվեցին նրան թաղել: Հանգուցեալի որդիները դիմեցին Շիրակի գաւառապետին և պատմեցին դէպքը մասին. գաւառապետը դիւղական հասարակութիւնից բացատրութիւն պահանջեց. զբաւոր յայտարարութեամբ յայտնեցին, թէ այդ կինը ապօրինի կենակցում էր մի քանի տարի մի գաղթական մարդու հետ, և որ վերջինը իր հայրենիքում կրն ունի: Ննչեցեալը, երկու օր տանը մնալուց յետոյ, գաղթական տէր խաչատուր անունով քահանային հանգուցեալի որդիները 15 ռուբլի տալով թաղել տուին»:

Գորու գաւառի ԲԱՂՈՒՐԻԱՆ գիւղից մեզ գրում են. «Մեր պրիստաւը՝ Ղազար-Քիլիսա գիւղի

ընակիչների գանգատի համաձայն՝ զինված արքեղ նոյն գիւղի բնակիչ Ալեքսէյ Սանդաձէի որդիներին, առնելով նրանցից արագածից հրացանները: Նրանց մօտ մնում է էլի մի արագածից հրացան, որ տրված է իրան՝ Ալեքսէյի անունով: Շատ ցանկալի է, որ այդ հրացանն ու մնացած զէնքերն էլ առնվեն նրանցից, որով գուցէ կարելի լինի խաղաղացնել նրանց և ապահովել շրջակայ գիւղացիներին: Հաւատար պայմանները մէջ նրանք հարկ թէ կարողանան այնպէս լանդուզն վարել իրանց զրացիներին հետ, ինչպէս մինչև այժմ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Իրէյֆուսի դատաւարութիւնը ընդհանուր զայրոյթ և անբաւականութիւն տարածեց Եւրօպայի և Ամերիկայի մէջ: Լրագիրները կատաղութեամբ յարձակվում են Իրէյֆուսի դատարանի վրա, որոնց դատավճիռը այնքան պարզ ասացողներ ունի, թէ արդարապատեման փորձաքնն այլոսով նստած է զինուորականներին և շտաբի ներկայացուցիչներին դատաւարութիւնից ազատելու: Անդրապատեման մասում և բողոք յայտնեց այդ անարդարութեան դէմ: Գերմանիայում, Աւստրիայում, Իտալիայում Իրէյֆուսի դատաւարութիւնը մեծ յուզումներ պատճառեց. Աւստրիայի և Իտալիայի մի քանի տեղերում ցոյցեր եղան Իրէյֆուսի դատարանի դէմ: Նայելով դատարանի տեղերից ստացված հեռագրերին, հասարակական վրդովմա կարծիքը ուղում է բաւարարութիւն գտնել վրէժխնդրութեան մէջ և այդ վրէժխնդրութեան միջոցը այն կը լինի, որ շատ երկիրներ չեն մասնակցի Պարիզի ցուցահանդէսին «Русскія Вѣдом.» լրագրի Բերլինի թղթակցից հեռագրում է.

«Պարիզի ցուցահանդէսին մասնակցելու դէմ սկսած շարժումը աւելի և աւելի մէջ չափեր է ընդունում: Միանման լուրեր ստացվում են Մեղիլայից և Ամերիկայից: Կաշի գործարանների միութիւնը և ցելլուլոզ պատրաստող հիմնարկութիւնները միաձայն մերժեցին ցուցահանդէսի հրահրը: Շատ լրագիրներ պահանջ են յայտնում, որ Բերլինը քաղաքը, որ պաշտօնապէս մասնակցում է ցուցահանդէսին, նոյնպէս վարվի: Սակայն մասուլի մի քանի օրգաններ, որոնք կատարելապէս համակրում են Իրէյֆուսին, նկատում են, որ այդ տեսակ վրէժխնդրութիւնը անարժան և աննպատակ բան է»:

Նոյն թղթակցից հաղորդում է, որ Իրէյֆուսի դատաւճիռը կատարելապէս հրաժարում է անբաւականութիւն պատճառեց Ելլաւտում, այն նահանգում, որի համար Ֆրանսիան այնքան ջանքեր է թափում վերջին քսան և ութ տարիները: Չը խօսելով Ելլաւտի նոր սերունդի մասին, որ զերմանակեան տիրապետութեան միանգամայն ընտելացել է, հին սերունդն էլ, նա, որ ակնատես էր 1871-ի աղէտներին, զինուորական դատարանի վճիռ մէջ տեսնում է Ֆրանսիայի անունը արատաւորող մի ապացոյց: Նշանաւոր է մանաւանդ այն հանգամանքը, որ Իրէյֆուսի անմեղութիւնը ապացուցող մարդիկ—գնդապետ Պիկար, սենատոր Շերբը-Վեստներ Էլլաւտից են և հեռացել են Ելլաւտից պատերազմից յետոյ, չը կամենալով Գերմանիայի հպատակ մնալ:

Ի վերջոյ բերում ենք մի քանի հեռագրեր, որ ստացել է «НОВОСТА» լրագիրը իր թղթակցիչներից: Լօնդօն: Լօնդում հիմնվում է «Պատուի վերականգնման լիգա, որ նպատակ է դնում խուսափել Ֆրանսիայից, Ֆրանսիական կուրօրոններից և նոյն իսկ Ֆրանսիական բժիշկներից: Ամերիկայում ստորագրվում են հանրագրիներ Իրէյֆուսի դատաւարութեան դէմ:

Բրիւսել: Բելգիայում հարկաւոր ուղերձներ են կաղվում տիկին Իրէյֆուսին ուղարկելու:

Հասագա: Հօլանդական լրագիրները, նոյն իսկ կղերականները, զինուորական դատարանի վճիռ դէմ են խօսում: Երկրի մէջ նկատվում է շարժում ցուցահանդէսի դէմ:

Հոնոլո: Իտալական մասուլը միաձայն, բացառութեամբ միայն մի եզրուական լրագրի, անտանում է Իրէյֆուսի դատաւճիռը Ֆրանսիայի բարոյական Սեդան: Նէպոլում թղթակցական ցոյցեր եղան Ֆրանսիական հիւպատոսարանի առաջ: Ֆրանսիայում ցոյց անողները հաւաքվեցին արքեպիսկոպոսի տան առաջ և կանչում էին. «Կորչեն եզրուները և զինուորական արդարապատեմութիւնը»:

Վիեննա: Բազմաթիւ ամբողջ Տրիեստում հաւաքվեց Ֆրանսիական հիւպատոսարանի առաջ և կանչում էր. «Կորչեն եզրուները, կեցցէ Պիկար, կեցցէ Ջօլա»:

Իսկ լրագրական յօդուածներին վերջ չը կայ. ամեն տեղ ամենախիտ լեզուով են խօսում Իրէյֆուսին մեղադրողներին դէմ: Բացառութիւնը ի հարկէ, հակասեմիտներն են կաղվում: Այժմ հարց է դառնալովում է Իրէյֆուս և մարդկութեան խղճի առաջ:— Ի հարկէ, ոչ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Տրանսվալի կառավարութիւնը ձերբակալել է «Transvaal Leader» լրագրի հրատարակչին Այդ ձերբակալութիւնը այնպիսի երկրից տարածեց անգլիական թագավորի թղթակցիցների վրա, որ նրանք շտապեցին փախչել արտասահման: Փոխան նաև «Times» և «Morning» լրագիրներին թղթակցիցները: Օտարերկրացիները կաղվում են խմբով:

«Daily News» լրագիրը հաղորդում է, որ անգլիական միսիոնարներ խորհրդի ժամանակ, ուրբաթ օր, միսիոնարութեան չինութիւնը շրջապատված էր անգլիան ամբողջով: Լորդ Սոլսբրիքին զիմաւորեցին աղաղակներով: Խորհուրդը որոշում կայացրեց զօրքեր ուղարկել հարաւային Աֆրիկա և Հնդկաստան: Որոշված է ուժեղացնել նաև հարաւային Աֆրիկայի պահստի զօրքը: Այդ քայլին առ այժմ անվում են իբր նախազգուշական միջոցներ: Վրիւզերին նորից հեռագիր ուղարկվեց այն մտքով, թէ պատերազմ ծագելու դէպքում ամբողջ պատասխանատուութիւնը նրա վրա է ընկնում: Հեռագիրը ուղարկատուի ձեռք է գրված:

Բրիտանական կառավարութիւնը այլ ևս չէ կատարում, որ Տրանսվալի դէմ պատերազմ յայտնելուց յետոյ, նա պէտք է միաժամանակ կալու սկսէ հարաւային Աֆրիկայի հանրապետութիւնների միացեալ ոյժի հետ: Ինչպէս երևում է, Իրէյֆուս և Վրիւզեր նախազգուշեցր զեռ. 1887 թ. ին զանապետութիւն են կաղվել Պոտեմպտրոմում, որի մէջ ասված է, թէ Օրանժեան հանրապետութեան և Հարաւային Աֆրիկայի ազատահանգները պարտաւորվում են օգնել միմեանց, եթէ դրանցից մէկին վտանգ լինի սպառնալիս դրանց: Անցնալիս կողմը մեծ պատրաստութիւններ են տեսնելու պատերազմի համար: Հրապարկւած է արդէն զօրքերին պատրաստ լինել և հրաման ստանալու պէս կաղվ Հարաւային-Աֆրիկա: Ընդամենը առ այժմ պատրաստ են գնալու 28 զուռ:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

3 սեպտեմբեր

ՎԻՆՏ: Վարչապալից ժամանեց զինուորական միսիոնարը և այցելեց իւնիէրներ զայրոցը և զինուորական շրջանի շտաբը: Երեկոյեան մի-նիստը ճանապարհ է ընկնում Պետերբուրգ: ԼՕՆՊՈՆ: «Times» լրագրին Պարիզից հեռագրում են, թէ լուր է պտտում, որ Իէլկասէ առաջարկել է Տրանսվալի Ֆրանսիական հիւպատոսին իր բոլոր աղղեցութիւնը գործ դնել Վրիւզերին անողղելու համար, որ նա ընդունի Չէմբերլենի առաջարկութիւնը:

ՊԱՐԻՑ: «Matin» լրագիրը հաւատացնում է, որ միսիոնարներ խորհուրդը սկզբունքով այն կարծիքը յայտնեց, թէ ներումն պէտք է չորհել Իրէյֆուսին Հրովարտակը, ինչպէս լսվում է, կը ստորագրվի երեքաթիւն, սեպտեմբերի 7-ին: ԲԵՂԻՆ: Ռուսաց արտաքին գործերի մի-նիստը երէկ երեկոյեան ժամանեց, և ապա ճանապարհ ընկաւ Վիւրադէն:

ԼՕՆՊՈՆ: «Daily News» լրագրին Կապրտադաից հեռագրում են, որ հազար մարդ զբաղված է Պրէտորիայի ամբողջութիւնը զօրքեղացիներով:

ԿԱՊԵՏՊՈՒՆ: «Times» լրագրի տեղեկութիւնները համեմատ, առաջին միսիոնար Երէյնէր հաղորդեց օրէնսդրական խորհրդին, որ Իէլլազօս ծովածոցի մօտ ժամանալով հիւանդալու 42 դէպք է եղել: Հիւանդացուները բոլորն էլ մեռել են:

ԲԵՂԻՆ: Կենթէլիչի դատը: Նօվափօլիչ, Մարիկօլիչ և Տօլոբօլիչ յայտնում են, որ նրանց վրա բարդում և մեղադրանքներ անհիմն են: 4 սեպտեմբեր

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Խարկօլի համալսարանի պրօֆէսոր Լազերմարի նշանակվում է նոյն համալսարանի թէկոսը:

ԽԱՐԿՈՎՍԿ: Նորեք հրատարակից կայսերական հրովարտակ Չինաստանում ազգային պաշտպանութեան կամ ազգային զվարդիացի նման մի բան հիմնելու մասին: Իւրաքանչիւր մարդ Չինաստանում պարտաւոր կը լինի մի առ ժամանակ ծառայել զօրքերի մէջ: Պատերազմի դէպքում այդ ձեռով կաղված զօրքերը պէտք է օրնական զօրքերի կեր կատարեն:

ՊԱՐԻՑ: Վալդէլ-Բուսօ յայտնեց զարբանեւտական արժանատեան խմբի պատգամաւորներին, որ դատաւարութեան գլուխութիւնը ապացուցվում է ամենաառատ, անվիճելի փաստերով: Ոչ

մէկ հանրապետական չի համարձակվի պախա-րակել կառավարութիւնը, երբ մեղադրողներին տարիները յայտնի կը դառնան իրանց ամբողջ ծաւալով:

ՊԱՐԻՑ: Կատաստանական ըննիչ Տաքը հրաման արձակեց բանտարկել վաթսուս մեղադր-վողներին և յայտնեց փաստաբաններին, որ իրանց կլիէնտներին հետ տեսակցելու համար՝ նրանք պէտք է պրօկուրորի թոյլտուութիւնը խնդրեն: Իէրուէլց հիւանդ է:

Տաքոյ փոշոցի վերաբերմամբ դիւմիտնե-րի ըննութիւնից երկաց, որ Գերէն ամսական մեծ առճիկ էր ստանում, որպէս զի կուի օրե-րին կանչէ Օրլէանի դքսի անունը: Վալլէս ըննութեան ենթարկեց օգոստոսի 20-ի ցոյցերի մէջ 17 մեղադրողներին և կը հաղորդի երկու-շարթի բոլոր դիւմիտները պրօկուրօրին:

5 սեպտեմբեր

ՊՐԷՏՈՐԻԱ: Այսօր յանձնվեց անգլիական գործակալին Տրանսվալի պատասխանը բրիտանական վերջին հեռագրին: ՊԱՐԻՑ: Բարձրագոյն դատարանի դատին ենթակայ մեղադրողներ փաստաբանները Տա-լիէրին մի զեկուցում ներկայացրին, որի մէջ պահանջում են, որ թէ իրանց և թէ մեղադրող-րին իրաւունք տրվի ներկայ լինելու նախա-պատրաստական նիստին:

Տաքը վճռեց, որ 45 մեղադրողներ դատի չեն ենթարկվելու, և այդ պատճառով բոլոր մե-ղադրողները 22 հոդի են մնում:

Տարլ Իւլպիլի յայտնեց, որ նացիօնալիստնե-րի այն խումբը, որը հարց յարուցեց պատգա-մաւորների ժողով հրաւիրելու մասին, զգուշան-քի զգացմանը է յարուցանում հանրապետական-ների մէջ, և այդ պատճառով ինքը, Իւլպիլի, չի մասնակցի այդ արհտացիալին:

ՊԱՐԻՑ: Տաքոյ փոշոցի վրա գտնվող տունը այժմ խիտ կերպով է պաշարված: Պաշարված-ների խնդրելին դեղք ուղարկել, Լէպին պա-տասխանեց, որ հիւանդին կարելի է տանել բանտի հիւանդանոցը:

ՊԱՐԻՑ: «Liberté» լրագրի աշխատակիցը տե-սակցութիւն ունի արժանատեան-սօցիալիստա-կան խմբի մշտական յանձնաժողովի անդամ Լազարի հետ, որին երէկ ընդունեց Վալդէլ-Բուսօ: Լազարս յայտնեց, որ Վալդէլ ցոյց տուեց իրան դատաւարութեան իրական և ճիշդ ապացոյցներ: Վաղը բոլոր հանրապետականնե-րը կը համոզվեն, որ գոյութիւն է ունեցող դա-տաւարութիւն: Ոչ մի համաձայնութիւն չէ երե-ւում զօրքի պարալիստներին և դատարիւններին մէջ: Գեներալներից ոչ մէկի վրա ստուեր չէ ըն-կնում: Լազարս համոզված է, որ Իէրուէլց դիւտա-ւորութիւն է ունեցող միայնակ գործիչ: Լազարս այն եզրակացութեան է դալիս, որ հայրամանքը պատճառաբանված է և որ հանրապետութիւնը քիչ էր մնում բռնութեան ենթարկվելու: Նրան մեծ վտանգ էր սպառնում:

ԼՕՆՊՈՆ: Պրէտորիայից ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, Տրանսվալի պա-տասխանը անգլիական յայտադրին, Օրանժեան հանրապետութեան աղղեցութեան պատճառով, բոլորովին բացատական եղաւ: Տրանսվալում պատերազմական տրամադրութիւն է տիրում: Բօլէրները վճռեցին կուել ազատութեան համար այժմ, որովհետեւ այն համոզման եկան, որ յե-տոյ կուից խուսափել չէ կարելի:

ՏԱՄԱՍՍՎԱ: Երէկ պաշտօնապէս վկայված է ժամանախօսի երկալը:

ՏԱՇԿԵՆՏ: Այսօր նահանգական դատաւանի դիւանատան մէջ գնդապետ Ստաշէվիկի ատրճա-նակի հարուածով ծանր կերպով վիրաւորեց «Русскія Туркестанъ» լրագրի խմբագիր-հրատարա-կիչ Ստօրգուենը, որը կէս ժամից յետոյ վախ-ճանկեց:

ԼՕՆՊՈՆ: Պրէտորիայից հեռագրում են, թէ Տրանսվալի պատասխանի պաշտօնական հա-ղորդութիւնը առայժմ տեղի չէ ունեցել: Լուրեր են պտտում, որ այդ պատասխանը բացատկան կը լինի: Նրա մէջ յայտարարված է, թէ հարաւ-ային Աֆրիկայի հանրապետութիւնը հիմնվում է զանազորութեան վրա, որ նա չէ կարող հրամար-վել ընտրողական իրաւունք չորհելու որոշմից հօժը տարի Տրանսվալում մնալուց յետոյ, բայց թէ կարող է ընդունել դրոթիւնը բարե-լաւելու խորհուրդներ:

6 սեպտեմբեր

ՎԻՆՏՆԱ: Այսօր ճանապարհ ընկաւ Պետեր-բուրգի սինօլի օրեք-պրօկուրօր Պրեդոնօս-ցեմ:

ՊԱՐԻՑ: Նախագահ Լուրէ ժամանակաւորա-պէս վերադարձաւ Պարիզ: Բարձրագոյն դատա-րանի բացվելու պատրաստութիւնները վերջա-ցել են: Բացումը տեղի կունենայ վաղը: Անցեալ դիշեր երկու մարդ, որոնք աշխա-

